Խաչիկ Դաշտենց

Ֆայտոն Ալեքը

1
Գյումրի քաղաքում շատ կառապան կար.
Այնտեղ էր ապրում Բաբիենց Հայկը,
Այդ տղամարդն էր Ալեքպոլ բերել
Առաջին փոքրիկ երկանիվ կառքը:

Այնտեղ էր ծնվել Ծուռվզենց Արշոն,
Աչքերով խաժակ, ձիերով նախշուն,
Ո՞վ տեսած չկա Կնուք Վարդանին,
Որ կանգնած էր միշտ իր կառքը քշում:

Հապա Կռո՞ւնկը: Մի՞թե չի անցել
Այդ ժիր գյումրեցին մի օր ձեր թաղով.
Այնտեղ էր ապրում հայտնի կառապան,
Հեքիաթի փոխված Ալեքն իր կառքով:

Ֆայտոն Ալե՛քը…Նա Շիրակի մեջ
Այդ անունով էր ծանոթ ամենքին:
Տունը կանգնած էր Սև ժամից վերև,
Ձորի-բողազի կանաչ բարձունքին:

Քարե տնակ էր փոքրիկ բոստանով,
Կատուն նստում էր հաճախ տանիքին,

Պատին թախծում էր «Մայր Հայաստանը»
Հայացքը հառած քաջ Անդրանիկին:

Ամեն առավոտ հերոսի պատվին
Նա կուլ էր տալիս մի գավաթ օղի.
Կենացդ, ազի՛գ… Եվ մտրակն առած,
Շապխան ծածկելով գնում էր գործի:

Հին կառապան էր Ֆայտոն Ալեքը,
Նախշ-գոտին կապած, հագած ձեռնոցը,
Ոտքին փայլում էր ֆանար-սապոգը,
Կրծքին՝ «Սարգիսով» մեծ ժամացույցը:

Երկու ձի ուներ զանգուլակներով,
Անիվներ կարմիր-կապույտ ճաղերով.
Որ չէ՞ր սլանում Ալեքի կառքը՝
Կարծես տեսիլք էր անցնում թաղերով:

Ի՞նչ եք զարմացած նայում երեսիս,
Ուզո՞ւմ եք ասեմ վերջին նշանը.
Ձիերից մեկի ճակատին խալ կար,
Որ հիշեցնում էր սարի շուշանը:

Իսկապես շիկ էր Ալեքի կառքը,
Այդ պատճառով էլ շախով գյումրեցիք
Սիրում էին նրա ֆայտոնով գնալ
Ժամ, նշանդրեք, կնունք, հարսանիք:

Արևածագից ոտքի վրա էր,
Վերջ չկար նրա ուղևորներին,
Մեկ-մեկ քշում էր աչքերը փակած,
Այնքան հմուտ էր ճանապարհներին:

Գյումրի՛ն, հին Գյումրին, ծանո՛թ, հարազատ,
Փողոցները լուռ, դաշտերը դուրան,
Ալեքը թեթև քաշում է սանձը
Եվ պլանում է դեպի Ախուրյան:

Շարված են հերթով դարբին Մեխակը,
Քարտաշ Հարութը, որմնադիր Լիպոն,
Ընկեր տղերք են, Ալեքի կառքով
Քեֆի են գնում Արփաչայ խմբով:

Երկու կողմերից կառքը փակել են
Բաղնոց Երեմն ու սալդաթ Աղասին,
Հեռվում ցոլում է Ալաջա սարը՝
Թիկունքը պարզած հայրենի Ղարսին:

Ձիերը կայտառ թռչում են առաջ,
Ծո, Ալե՛ք, կեցի՛ր, ընձի քովը դառ:
Բոստան Օնեսն է բարձրաձայն կանչում,
Կառքի հետևից վազում հևասպառ:

Տե՛ղ չկա, Օնես, ռեսորը կկոտրի,
Դու ոտքով արի, ախպորը դուրբան.
Չէ՛, ոտքով որ գամ, ուշ կեղնի, Ալե՛ք,
Տղեքը ճամփես աշելով մեռան:

Եվ թավագլոր տալով Օնեսը
Մի կերպ կպչում է երկաթե ճաղին,
Ձեռքում նոր քաղած կոտեմն ու բողկը,
Գրպանում՝ կանաչ վարունգն ու օղին:

Դեռ Արփաչայից քաղաք չհասած՝
Շրջապատում են Ալեքին խմբով.
Ալեք ջան, գործ կա, ջահել տղեք ենք,
Էս գարնան գլխին նշանվեց Համբոն:

Էսօր գնում ենք մեր հարսին բերենք,
Մեզ էս սհաթին թոցրու Հոռոմ,
Թեզ էրա, Ալե՛ք, ճամփեն երկար չէ.
Հոռոմ ենք գնում և ոչ թե Հոռոմ:

Տղե՛ք, բեզրած եմ, ռեյսեն նոր եկա,
Ձիանքը մեղք են, դիմեք ուրիշին:
Չէ՛, Ալեք ախպեր, պատվի խնդիր է,
Ասբի ֆայտոն կուզենք մեր հարսին:

Ասբի ֆայտո՞ն: Դե լավ, ներս մտեք,
Թող փեսի սիրտը չմնա խռով:
Ձիլ զրնգում է Ալեքի կառքը,
Ջուռնան է փչում աստղոտ գիշերով:

Նստած են մեջը Սելավի Սեթը,
Դուդուկչի Շավոն, Մկոն աժդահա,
Վառված երգում է գուսան Շերամը՝
«Սիրուննե՛ր, միք նեղենա. . .»:

Ահա երևաց Կռունկի կառքը,
Փոշին է ֆռռում ակների շուրջը,
Մեջը նստած են Աշուղ Ջիվանին,
Պադվալի Վաղոն, Պոլոզ Մուկուչը:

Նրանց դիմացը ջահել բանաստեղծ
Ավոն է թախծում, հենված ձախ թևին,
Աչքերը հառած մթնում առկայծող
Մայր Հայաստանի արևածագին:

Ալեքը հեռվից բարևեց նրանց:
Անիեն կուգամ, ասաց Կռուկը,
Եվ նա սլացավ Գյումրի տանելով
Քանդված քաղաքի քարերի խունկը:

Հետևյալ օրը հարսին թափորով
Ալեքը մինչև Բոշի թաղ տարավ,
Ու չեղավ երբեք, որ գեթ մի շաբաթ
Այդ կառքը մնար աշխարհում պարապ:

Իսկ տարեմուտին, օ՜, ի՜նչ եռանդ էր,
Երբ բուքն էր ոռնում Ջաջուռի սարով,
Ալեքի կառքը մի սահնակ դարձած
Թռչում էր Գյումրու ձյունոտ դաշտերով:

Բաբիենց Հայկը, Արշոն, Կոռունկը
Ընդդեմ բնության տարերքին ըմբոստ,
Ռուս սպաներին թոցնում էին արագ
Բերդ, Սեվերբսկի կամ Կազաչի պոստ:

Մրրիկի նման արշավում էին
Դեպի Քարախաչ սարերի ձյունը,
Գետնի տակ թողած գյումրեցի հայդուկ
Պադվալ Վաղոյի տաք գինետունը:

Կնութ Վարդանի սահնակից մի օր
Բեռնակիր Մկոն վայր ընկավ հարբած
Եվ բացականչեց ձյունների տակից.
«Ծո, կայնի՜, օղո՛ւլ, պասաժիրդ մնաց»:

Բայց ամենից շատ Ալեքն էր հոգնում,
Օ՜, նրա նման կառապան չկար,
Մտրակը բարձրը՝ ձեռքի մեջ պահած՝
Նա մինչև Բաղդադ քշելով կերթար: